2. Շահենը մասնակցել է 1939 թվականի և 1956 թվականի հայ արվեստի և գրականության տասնօրյակներին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ 1945-1946 թվականներին Մոսկվայում կայացած ստուգատեսներին, 1973 թվականին՝ Ալմա Աթայի «Միջազգային Տրիբունա» երգի տոնին, 1975 թվականին Թբիլիսիում կայացած «Անդրկովկասյան գարուն» փառատոնին:

Շահենի ստեղծագործության վրա մեծ ազդեցություն են ունեցել Շիրակի ժողովրդական երգարվեստի հարուստ ավանդույթները: Շահենի երաժշտական լեզուն լի է զգայնությամբ, ռիթմիկ պատկերների ճկունությամբ, լայնաշունչ երգային ու պարային տարրերի զուգորդմամբ: Ժողովրդականություն են վայելում «Սասնա ծուռ», «Ալմաստը շողում է». «Խռոված էր», «Թուխ մազերուդ», «Անծանոթ սեր», «Նաիրյան դալար բարդի», «Անցա- գնացի», «Կոմիտաս» և այլ երգեր: